

10859

ՀԱԽՑ ԼՈՒՄ. ԺՈՂ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ - ԱՆՑ. ԴԱՅ. ԳԼԽ. ՎԱՐՉ.

Ա.ՀԵ. Ա. Ա.ՍԻՏԵ. ԴՊՐՈՅԵ ԳՐԱ.ԴԱ.ՐԱ.Ն

ԲՆՈՒԹՅՈՒՆ և ԱՇԽԱՏԱՆՔ № 10
Խմբ. Մ. Զարաֆյանի լիգ Ա. Արարատյանի

ՈՐ ՅԵՎ ԶՈՒՐ



S 46

0-21

ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՄԱՔՆԵՐԻ Թ.
ՅԵՎԵԳ 6-1927

546

①-21

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃԱՆԻ ԴՐՈՅԹԻ ԳՐԱԴԱՐԱՆ
20 JUL 2010

№ 10 «ԲԵՌԻԹՅՈՒՆ ՅԵՎ. Օ.ՀԽԱԶՈ.Ն.Ի» № 10
Խմբ. Մ. Զառաֆյանի յեվ Ա. Արարատյանի

ՈԴ ՅԵՎ ԶՈՒՐ

Հ.Ա.Խ.Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՎԵՎ.Յ.Ն.—1927

02.09.2013

10859

I. ՈԴԻ ԲԱՂԱԴՐԻՉ ՏԱՐՐԵՐԸ

Ողի նշանակությունն այնքան մեծ է բույսերի, կենդանիների և մարդու համար, վոր ամոթ կլինի, յեթե մենք ավելի մոտիկից և ավելի մանրամասն ծանոթ չլինենք նրա բաղադրիչ տարրերի և նրանց նշանակության հետ:

Ողի գլխավոր բաղադրիչ տարրերը յերկու գազեր են՝ թթվածին և բորակածին կամ աղոտ, վորոնցից յերկրորդն առաջինից մոտավորապես չորս անգամ շատ ե, այնպես վոր կարելի յէ ասել, վոր թթվածինը կազմում ե նրա մեկ հինգերորդ մասը, իսկ բորակածինը — չորս հինգերորդ:

Բացի այդ գազերից, ողի մեջ մտնում են նաև ջրաչին գոլորշիները և այսպես կոչված ածխաթթվական գազը: Զրային գոլորշիների քանակն ողի մեջ կայուն չե, կախված ե յեղանակների փոփոխությունից. Խոնավ յեղանակն, ի հարկե, նրանց քանակն ավելի շատ ե, բայց կարելի յէ ասել, վոր միջին թթվով նրանք մոտավորապես մթնոլորտի $\frac{1}{80}$ մասն են կազմում: Իսկ ինչ վերաբերում է ածխա-



62083 - 67

Դրառնակ. 445 ր. հ. 051 Տիրաժ 6000

Գետհրատի յերկրորդ տպարան Յերևանում — 1382

թթվական գազին, նա համեմատաբար շատ չընչին տեղ ե բռնում, այսինքն ողի բաղադրության լերեք տաս հազարերորդ մասը։ Այսուամենալոնիվ, ինչպես մենք հետո կտեսնենք, այդ չընչին մասն ել շատ խոշոր գեր ե կատարում բընության մեջ։


Ուրեմն այժմ ձեզ հետ միասին ուսումնասիրելու յենք թթվածինը, ազոտը, ջրածին գոլորշիները (այսինքն ջուրը) և տծիաթթվական գազը։

2. ԹԹՎԱԾԻՆ ՆՐԱ ՍՏԱՆԱԼԸ ՅԵՎ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քանի վոր մենք ուզում ենք թթվածնի հատկությունների հետ ծանոթանալ, պետք ե աշխատենք նրանից ձեռք բերել առանձին, մյուս գազերից անկախ։ Թվում ե, թե շատ հեշտ պիտի լիներ, յեթե վերցնելինք ողի միջից, փորով հետև այնտեղ նրանից շատ կա։ Բայց պիտի ասեմ, վոր այդ բանն այնքան ել հեշտ չե, այդ պատճառով թթվածին ստանում ենք բոլորովին այլ ճանապարհով։

Բայց ողից, թթվածին պատահում ե և ուրիշ շատ մարմինների մեջ, որինակ լերկաթի, պղնձի ժանդի, սնդիկի ոքսիդի, ջրի, կավիճի, կրի և այլն։ Յեթե հիշած մարմիններն ուժեղ

ջերմության յենթարկենք, կարող ենք նրանց հետ միացած թթվածինը դուրս խլել և հավաքել առանձին ամանի մեջ։ Դրա համար հարկավոր ե վերցնել մի փոքրիկ շիշ կամ փորձանակ, նրա մեջ ածել մի փոքր սնդկական ոքսիդ, վորը մի կարմիր փոշի յեւ և կարելի յեւ գեղատներից ձեռք բերել, փորձանակի բերանը խցանով պինդ փակել, այդ խցանի միջով ապակե բարակ խողովակ անցկացնել և փորձանակի տակ դնել վառած սպիրտալրոցը։ Մի փոքր տաքաց-



Նկ. 1. Թթվածին ստանալը

նելուց հետո խողովակի միջով դուրս կդա մաքուր թթվածին։ Թթվածինը հավաքելու համար վերցնում ենք մեկ ուրիշ լախաբերան անոթ, նախ լցնում ենք լիքը ջրով և շուռ ենք տալիս մեկ ուրիշ ջրով լի ամանի մեջ։ Խողովակի ծալըն


այդ ամանի միջով անց ենք կացնում մյուս ամանի տակը, ինչպես այդ ցուց ե տրված նկարի վրա։ Յերբ սկսում ենք սնդկական թթվուկը տաքացնել, նրանից անջատված թթվածինը խողովակի միջով անցնում է ջրով լիքը գլանի մեջ և պղպջակներով բարձրանում վերև։ Գլանի ջուրը նրա ճնշման տակ հետզինետե դատարկվում և տեղը բռնում է թթվածինը։ Յերբ գլանը բռլորովին լցվեց թթվածնով, տակից ապակիով փակում ենք գլանի բերանը և ջրից դուրս հանում. արդեն պատրաստ ե, մենք այժմ ունենք մաքուր թթվածին։

Ավելի հաճախ սնդկական ոքսիդի փոխարեն վերցնում են բերթոլետյան աղ, վոր նույնպես իր մեջ հարուստ թթվածին և պարունակում և պետք ե ասել, վոր ավելի հեշտ և նըրանից թթվածին խլել, քան սնդկական ոքսիդից։ Բերթոլետյան աղի հետ խառնում են ավագ կամ մանգանի պերոքսիդ, այն ժամանակ ավելի թեթև ջերմացումով և ավելի շուտ են ստանում թթվածին։ Կարելի լեռ ոգտվել նաև բորակից, վոր նույնպես թթվածնով հարուստ ե, բայց պետք ե նկատենք, վոր բանն այստեղ միայն թթվածնի հարստությունը չե, որինակ կը ե կավիճի մեջ ել թթվածին շատ կա, բայց փորձեցեք նրանց միջից թթվածին հանել, ամե-

նառուժեղ ջերմացումով ել ձեզ չի հաջողվի այդ անել, վորովհետեւ ախտեղ թթվածինը շատ ամուր կերպով միացած և մյուս պարզ տարրերի հետ։

3. ԹԹՎԱԾԻՆ ՅԵՎ ԱՅՐՈՒՄՆ (ԹԹՎԱՑՈՒՄՆ)

Յերբ վոր թթվածինը հավաքեցինք, կարող ենք նրա հետ մի շարք փորձեր կատարել։ Ի հար-



Նկ. 2.

Ա.	Բ.	Գ.	Դ.
Մոմը թթվ- փածնի մեջ ալրփում ե պայծառ լույ- սով	Ածուխի կառ- ըը թթվածնի ալրփում ե առանց բո-	Ծծումըը թթվածնի ալրփում կառնի մեջ կապույտ սով	Յերկաթե լարը թթվ- փածնի մեջ ալրփում այլույտ ե կայծեր ար- ձակելով.

Կե զրա համար պետք ե ունենանք մի քանի բանկա թթվածնի պաշար։ Վերցնում ենք փակի մի բարակ ձեղ, այրում ենք և մի քիչ հետո փչելով հանգինում, նրա ծալրին մնում ե մի

կայծ։ Յերբ այդ ծայլը մտցնում ենք թթվածնի մեջ, նա վարկենապես բռնկվում ե և պայծառ բոցով այրվում ափելի ուժեղ, քան սովորական ողի մեջ։ Այստեղից ինչ կարելի լի է դրակացնել։ Պարզ ե, վոր ուժեղ այրվելու պատճառը թթվածինն ե։ Մաքուր թթվածնի մեջ այս գումը կատարվում ե արտգ։ Կարծեա մենք պիտի շատ գոհ լինենք, վոր ողի մեջ թթվածնի հետ խառն ե ազոտը։ Յեթե մեզ շրջապատող ամբողջ ողը միայն թթվածնից լիներ կազմված, այն ժամանակ հրդեհ պատահելիս ամբողջ գլուղ, քաղաք մեկ անգամից կրոնկվելին և այլևս վոչնչով չելինք կարող նրանց հանգինել։

Մեկ ուրիշ փորձ ել կատարենք։ Վերցնենք կարսիր լուսածին, գնենք յերկար կոթով մետաղե դդալի մեջ, մի ծայրն այրենք և անցկացնենք թթվածնով լի բանկալի մեջ։ Յերբ լուսածինն այրում ենք ողի մեջ, նրա բոցն այնքան պայծառ չե, իսկ թթվածնի մեջ նա այնքան կատաղի լի բռնկվում, վոր նրան նայել դժվար ե, —աչք ե կուրացնում։

Ահա, ելի մեկ ուրիշ հասարակ փորձ. վերցնենք բարակ յերկաթե լար, նրա ծայրին կապենք մի կտոր չոր խցան, խցանն այրենք և մտցնենք թթվածնի մեջ։ Այստեղ մենք մի անսպասելի բանի կհասդիպենք։ Կրակն ընկնում ե

յերկաթե լարի վրա և լույսն սկսում ե այրվել պայծառ լույսով, ավելի տայծառ, քան թե փայտի ճեղն ողի մեջ։ Տեսնում եք ուրեմն թթվածինն ինչպես յեռանդուն գեր ե կատարում այրման ժամանակ։

Յերբ գարբինը հնոցի միջից հանում ե շիկացած յերկաթը կուելու համար, յերկաթի յերեսից փայլուն կալծեր են ցայտում ամեն կողմ. դա առաջ ե գալիս յերկաթի փոքրիկ մասնիկների ողի թթվածնի մեջ այրվելուց։ Յեթե մեզ շրջապատող ողն ամբողջովին մաքուր թթվածնից լիներ, այն ժամանակ յերկաթի կտորը շիկացնելու կարիք չկար, մի փոքրիկ կայծն ել բավական եր, վոր նա ամբողջովին այրվեր, ինչպես վերելի փորձի մեջ բարակ յերկաթալարը։

Դիտնականներն ուշադրությամբ այդ խընդիրը քննելուց հետո յեկան ան յեզրակացության, վոր այրումը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ այր վող նյութի միացումն ողի թթվածինին հետ։ Մի վորեւ մարմնի այրումն արագ միացումն ե թթվածնի հետ։ Յեթե ողի մեջ թթվածին չլիներ, յերկրիս յերեսին վոչ մի այրում տեղի չեր ունենա, Այժմ, կարծում եմ, զուք առանց իմ ասելու կհասկանաք, թե ինչո՞ւ վառարանը վառելիս ուզում ենք, վոր ողի ուժեղ հոսանք լինի. յեթե չկա, ինքներս փչելով

4. ԹԹՎԱԾԻՆ ՅԵՎ ՇՆՉԱՐՈՒԹՅՈՒՆ

հոսանք ենք առաջացնում, վորպեսզի այդ հոսանքի միջոցով ողի նոր թթվածին զնա ալրվող փայտերի մոտ և նրանց հետ միանա:

Սակայն բնության մեջ մարմինների և թթվածնի միացում կարող ե տեղի ունենալ և դանդաղ կերպով, այն ժամանակ մենք ասում ենք, թե տվալ նյութը թթվեց: Նշանակում է՝ կարող ե լինել արագ թթվացում կամ ալրումն և դանդաղ թթվացում: Ի հարկե, դուք իմանում եք, վոր յերբ յերկաթի կտորն ընկած ե լինում թաց տեղ, ժանգոտվում ե. բանից դուրս ե գալիս, վոր այդտեղ ել յերկաթի հետ միանում ե ողի թթվածինը: Ուրեմն ժանգը յերկաթի և թթվածնի միացումն ե կամ ինչպես ասում են յերկաթի ոքսիդը (թթվուկ). Թաց յերկաթը սովորական բարեխառնության աստիճանի ժամանակ ողի մեջ թթվանում ե:

Իսկ չոր յերկաթը թթվանում ե ավելի բարձր բարեխառնության ժամանակ, ինչպես որինակ դարբնի հնոցի մեջ շիկացրած յերկաթի կայծերը, վորի մասին վերեւում հիշեցինք, յերկաթի թթվացման արդյունք են: Ցեղե կուզեք, իսկական յերկաթի ոքսիդն այդ կայծերն են, իսկ ժանգը յերկաթի ջրոքսիդ ե, այսինքն յերկաթի ոքսիդը չըի հետ միասին:

Ի զո՞ր չե, վոր հիվանդանոցներում ծանր հիվանդներին շնչելու համար տալիս են մաքուր թթվածին, առանձին բարձերի մեջ հավաքած: Խեղդամահ անել մարդու, նշանակում ե զրկել նրան ողի թթվածին շնչելուց: Դիտնականները հետազոտել և խմացել են, վոր շնչառությունը հենց թթվածին ներս ուղարկելն ե մեր մարմնի մեջ, վորտեղ նա միանում ե մեր մարմինը կազմող նյութերի հետ. կարելի լի ասել, վոր յերբ մենք շնչում ենք, մեր մարմնի ներսում կատարվում ե դանդաղ ալրումն կամ թթվացում: Ուրիշ խոսքով, մենք անընդհատ ժանգոտում ենք: Ցեղե թեկուզ դանդաղ ալրվում ենք, նշանակում ե մեր ներսում պետք ե շերմություն առաջանա: Իսկապես ել այդպես ե. մեր մարմինը մըշտապես տաք ե: Շնորհիվ մեր մեջ կատարվող դանդաղ թթվացման մեր մարմինը մշտական ջերմություն ե արտադրում:

Թթվածնին ենք պարտական, վոր մեր վառելանցութերը՝ փայտ, ածուխ և այլն ջերմություն են տալիս. յեթե թթվածինը չլիներ, այդ վառելիքները վոչ մի արժեք չելին ունենա:

Թեև հիվանդներին մաքուր թթվածին են տալիս շնչելու, բայց առողջ մարդու համար յեր-

կար ժամանակ մաքուր թթվածին շնչելը ֆլասակար ե, վորովհետև մարդու մարմնի մեջ նյութերի թթվացումը չափազանց արագ կկատարվի և մարդը կհյուծվի:

Յեթե ուզում ենք, վոր ալրումն արագ կատարվի, մենք այնպես ենք անում, վոր ողի թթվածինը հնարավորություն ունենա վառելիքի բոլոր մասնիկների հետ լավ շփվելու։ Որինակ, փայտի կտորներն ավելի մանրացնում ենք կամ ածուխի կույտը ցրում։ Այնտեղ, վորտեղ նավթ են գործածում իբր վառելիք, նավթն ուղղակի վառարանի մեջ չեն ածում, այլ մի առանձին գործիքի միջցով սփռում են, այն ժամանակ նավթը բաժանվում է բազմաթիվ մանր կաթիւների և նրանցից ամեն մեկը բռնկում ե շրջապատող ողի թթվածնի ներկայությամբ։ Այդ գործիքը գործ են ածում շոգեշարժների և փռերի մեջ, վոր կոչվում ե ֆորսունկա կամ ցնդիչ։

5. ՄԼՈՂ ՍԵՐՄԻ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՄԵԶ ԱՐԱՋԱՑՈՂ ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ

Ալրման մասին ալսչափ տեղեկություն ունենալուց հետո, ալժմ կարող ենք բացատրել, թե ինչու նոր ծլող սերմի կամ աղբի փտելու ժամանակ ջերմություն ե առաջանում։ Ինչու ծլող սերմի համար ողի և խոնավություն ե պետք,

վորի համար ալնքան հոգատարություն են ցուց տալիս հողագործները, ցանելուց առաջ և հետո, հողը մշակելիս և աղն։ Բանն այն ե, վոր ամեն մի նոր ծլող սերմ շնչում ե այնպես, ինչպես ամեն կենդանի արարած և սերմի շնչառությունը նույնպես կայանում է նրանում, վոր նրա մեջ զտնված նյութերը դանդաղ միացում են ունենում ողի թթվածնի հետ, վորի պատճառով առաջանում ե ջերմություն։

Պարզ ե, վոր յեթե սերմի նյութերն այրվում են, իսկ նոր նյութ նա վոչ մի տեղից չի ստանում, ուրեմն նրա քաշը պետք ե պակասի. և իսկապես, ինչպես հետագոտությունները ցուց են տվել, հողի մեջ ցանած մեկ քիլոգրամմ սերմից ստացվում ե մոտավորապես 730 գրամմ գալար ծիլեր, այսինքն կորչում ե 270 գրամմ։ Մենք արդեն տեսանք, վոր յերկաթը ժանգոտում ե ճիշտ այն ժամանակ, յերբ թաց ե, այնպես ել հողի մեջ տնկած սերմը խոնավության կարիք ունի, վորպեսզի սկսեն նրա նյութերը միանալ թթվածնի հետ։ Պետք ե ի նկատի ունենալ, վոր այս դեպքում նշանակություն չունի, թթվացողը կենդանի նյութ ե, թե ե՞ անկենդան. թե մեկը և թե մյուսը հավասարաչափ (յերկաթ և սերմ) յենթարկվում են բնության որենքներին։

Այսպես ուրեմն, ծլող սերմը կարիք ունի ողի՝ շնչելու համար, իսկ նրա հետեանքով առաջացած ջերմությունն ոդնում ե փրապեսզի նրա մեջ ամբարփած ալլուրի պաշարը ձեափոխվի և դառնա սնունդ՝ մատադ ծիլի համար։ Նույն ջերմությունը նպաստում ե սերմի ներսում կատարփող փոփոխություններին։ Յեթե հողը շատ սառն ե, այն ժամանակ սերմը չափազանց շատ ջերմություն է կորցնում և ալդ գործողությունները տեղի չեն ունենում։ Ահա, թե ինչու սերմի ծլելու պարմաններից մեկն ել այն ե, փոր արելք բափականաչափ տաքացրած լինի հողը, փորպեսզի վերջինս սերմի ջերմությունը չխլի։

Բացի այդ՝ յեթե վորեե պատճառով հողի յերեսը կեղև ե բռնել, պետք ե փշըել կամ ուրիշ միջոցներով մշակել, փորպեսզի ծլող սերմի համար անհրաժեշտ ոդը կարողանա ներս մտնել։ Այդ քանդումը մեկ ուրիշ նշանակություն ել ունի, նա ճանապարհ ե բաց անում մատադ ցողունը վերև բարձրանալու համար և հնարավորություն ե տալիս հողի միջից դուրս գալու ազատ ողի մեջ։ Այս բոլորին հողագործն ուշագիր կերպով պետք ե հետեւ, փորպեսզի առանց բերքի չմաս։ Վոչ թե աստծու կամքից, այլ աշխատավոր հողագործի ձեռքի և խելքի արդյունքից ե կախված բերքի հաջողությունը։ Գիտության տվյալների վրա

հիմնվելով՝ հողի խոնավության պահպանման և հողի մշակման միջոցով միշտ կարելի յելավ բերք ստանալ։ Արտասահմանում, վորտեղ սովորել են հողը գիտական հիմունքներով մշակել և հողագործությունը գիտական հիմունքներով աշնել, մի քանի անգամ ավելի բերք են վերցնում, քան մեզանում։ Որինակ, մեկ դեսյատինից չորս տոնն ցորեն են վերցնում, իսկ մեզանում, հաջող գեղըում՝ մեկ տոն։ Գիտական հիմունքներով վաստառների հետ կոիմն ել հեշտ կլինի։

Յերբ աղբը փառում ե, այնտեղ ել ջերմություն ե առաջանում, այսինքն նրա մեջ դտընված նյութերը միանում են թթվածնի հետ։ Աղրի մեջ առաջացած ջերմությունն, ի միջի ալլոց, անասունների գոմն ել ե տաքացնում։ Վորպեսզի աղբը լավ հանի, այսինքն՝ փորպեսզի նրա փառումը կանոնավոր ընթանա, չպետք ե շատ խիս գարսել և կուլտեր կազմել, վորովհետեւ այն ժամանակ նրա մեջ ողը չի կարող թափանցել։ Ի միջի ալլոց, յերբ աղբը փոած ե եղել անասունների տակ, այն ժամանակ կուլտ կազմեն անգամ ել վտանգավոր չե, փորովհետեւ նըրանց տակը փոած հարդի իր մեջ ող ե պարունակում։

Յեր ուշագրությունը հրավիրում ենք նաև մի այլ հանգանակորի վրա, փոր ողը հարկավոր

ե նաև նոր ձվից գուրս յեկող ճուտերի համար։
Ոդը թափանցում ե ձվի սաղմի մեջ, ձվի կրա-
լին կճեպի բազմաթիվ ծակոտիների միջով։ Յե-
թե այդ ծակոտիները ծեփենք վորեե նյութով,
որինակ լաքով, այն ժամանակ այդպիսի ձվից
լերեք ճուտ չի գուրս գալ։

Ուրեմն կարող ենք առանձնապես շեշտել,
վոր ամեն տեղ և ամենուրեք բնությու-
նը մի հնոււն մնայուն որենքն երն ունի։

6. ԶՐԱՅԻՆ ԳՈԼՈՐԾԻՆԵՐՆ ՈԴԻ ՄԵՋ ՅԵՎ ԱՆՁՐԵՎ

Այժմ դառնանք մեր ոդի մեջ գտնված ջրին,
վոր գոլորշիացած վիճակում մտած ե նրա բա-
ղադրության մեջ։ Ավելորդ կինի այստեղ խո-
սել այն մասին, թե ջուրը վորքան անհրաժեշտ
րան ե մարդու համար, սակայն պետք ե հիշել,
վոր յեթե ոդի մեջ ջրային գոլորշիները շինելին,
այն ժամանակ կյանքն ել հնարավորություն չեր
ունենա այնտեղ գոյություն ունենալու։ մեր
մարմնի մաշկն այնպես արագ կչորանար ու կը
ձաքձքեր, վոր մենք մեր մեջ գտնված ջրի արագ
գոլորշիացման հետևանքով կմեռնելինք։ Բույսերն
ել լավ որի չելին լինի։ Անձրեները կդադարե-
լին, վորովհետեւ անձրենի կաթիներն ոդի ջրային
գոլորշիներից են գոյանում։

Հարավային Ամերիկայում մի հովիտ կա,
վոր կոչվում ե Մահ վան հովիտ, վորտեղ ողն
այնքան չոր ե և ջրային գոլորշիներից համարյա
զուրկ, վոր մինչև այժմ վոչ մի մարդ չի կարո-
ղացել նրա միջով անցնել։ Այդ հովիտը զուրկ ե
ամեն տեսակ լուսաերից։

6 2083 - 64

Վորտեղից հավաքվեցին ջրային գոլորշինե-
րը մթնոլորտի մեջ։ Ամենից առաջ բոլորիդ
ել հայտնի իե, վոր յերկրագնդի վրա շատ ջրեր
կան՝ ովկիանուներ, ծովեր, լճեր, գետեր և ալին։
Այդ ջրերն արեի ջերմության ագգեցությունից
անընդհատ գոլորշիանում են։ Յերկրագնդի մի-
ջից ել ջրեր են գոլորշիանում, բույսերը, կեն-
դանիները նույնպես ջրային գոլորշիներ են ար-
տաթորում։ Որինակ՝ ապացուցված ե, վոր հա-
ճարն իր յերեք ամսվա կարճատե կյանքի ըն-
թացքում մոտավորապես ութը քիլոգրամմ ջուր
ե գոլորշիացնում։ Իսկ ինքն ընդամենը կշռում
ե մի քանի գրամմ։ Կեշիի միջակ ծառն որական
գոլորշիացնում ե 5 գույլ ջուր և այն։ Այս հաշ-
վով կարող եք յերեակայել, թե բոլոր դաշտերն,
արտերն ու անտառներն ինչ անոելի քանակու-
թյամբ ջուր են գոլորշիացնում։ Ո՞ւր ե գնում
այդչափ գոլորշին։

Արեի ջերմության ագգեցությամբ անդադար
ողը տաքանում ե և թեթևանալով բարձրանում

գեպի վերև։ Բարձրացող ողի տաք հսսանքի հետ
միասին գետնից բարձրանում են ջրալին գոլոր-
շիները և վերին շերտերին հասնելով խտանում
են, վորովհետեւ այստեղ ցուրտ ե։ Խտանալով
նորից դառնում են ջուր կամ ջրալին փոքրիկ
կաթիներ, վորոնց մենք ներքելից տեսնում ենք
ամպերի կերպարանքով։ Ասպը ջրի փոքրիկ կա-
թիների համախմբումն ե։ Յեթե այդ կաթինե-
րը միանում են միմյանց հետ և կազմում ավե-
լի խոշոր կաթիներ, այն ժամանակ ստացվում
են անձրևեր ամպեր և վորովհետեւ ողը չի
կարող խոշոր կաթիներին դիմադրել, նրանք
ընկնում են ցած, ուրիշ խոսքով անձրեւ ե գա-
լիս։

Դուք գիտեք, վոր անձրեի ջուրը գեղնա-
վուն ե. այդ նրանից ե, վոր անձրեի կաթինե-
րը վայր ընկնելու ժամանակ իրենց հետ ցած են
բերում ողի մեջ գտնված փոշուհամիկները, հե-
տևաբար անձրեւ մաքրում ե ողը և իսկապես,
անձրեից հետո միշտ ոդն այնպես պարզ ե լինում,
վոր ավելի հեռուն կարելի յե տեսնել։ Անձրեի
ջուրը գետին թափվելով մեծ մասամբ ծծվում ե
հողի մեջ և կազմում ստորերկրտա ջրեր, վո-
րոնք դառնում են մեր աղբյուրների ակունքը կամ
հորերի ջուրը։

Բայց ինչո՞ւ հորերի կամ աղբյուրների ջուրը

պարզ ե և համեղ, այսինչ անձրեի ջուրը գեղ-
նագույն ե, անհամ և խմելու համար անդուրե-
կան։ Բանն այս ե, վոր յերբ անձրեի ջուրը ծըծ-
վում է հողի մեջ, նրա շերտերը ճանապարհին
բռնում են նրա մեջ յեղած փոշիները և ջուրը
մաքրում։ Բացի այդ՝ անձրեային ջուրը հողի մի-
ջով անցնելիս լուծում է հողի մեջ գտնված
նյութերից որինակ, աղը, բորակը, մասամբ կիր,
գաճ և այլն։ Վերջապես անձրեային ջուրն իր
մեջ լուծում է նաև գետնի ծակոտիներում գրտ-
նըված ողը։ Հետեանքը լինում ե այն, վոր մենք
ունենում ենք խմելու ջուր, վոր իր մեջ լուծ-
ված աղերի և ոդի շնորհիվ ունենում ե լավ,
հաճելի համ։ Բայց յեթե այդ աղերի քանակը
շատ ե, այն ժամանակ նա խմելու համար ան-
պետք ե, որինակ՝ ծովի ջուրը, գետերի ջուրը
և այլն։

Յեթե ջրի մեջ ոդ չկա լուծված, նույնպես
անպետք ե, նրա մեջ չեն կարող ապրել ձկներ,
վորովհետեւ նրանք շնչում են հենց ջրի մեջ
լուծված ողը։ Ակվարիումների մեջ ձկներ պա-
հողներն այդ բանը շատ լավ գիտեն։ Նրանք
հաճախ ջուրը փոխում են, յերբ նկատում են,
վոր ձկները դժվարանում են շնչել։

Վոր սովորական ջրի մեջ միշտ լուծված ոդ
կա, այդ մենք հեշտությամբ տեսնում ենք այս


ժամանակ, յերբ սառը ջուրը տանում ենք տաք տեղ և նրա միջից բարձրանում են բազմաթիվ բշտիկներ: Իսկ այդ բշտիկների թիմս ավելի ևս շատանում ե, յերբ ջուրը տաքացնում ենք: Այս բոլորից մենք յեղբակացնում ենք, փոր տաք ջրի մեջ ոդն ավելի վատ և լուծվում, քան սառը: Այդ պատճառով սառը ջրի մեջ լուծված ոդը տաքացնելիս՝ նրա միջից մաս-մաս հեռանում ե:

Իսկ աղն ու շաքարն ընդհակառակը, լավ են լուծվում տաք ջրի մեջ: Արդեն փորձած կը լինեք, թե վորքան դժվար է սառը թելի մեջ շաքարը հալվում: Թե ինչու տաք տեղում գարեջրի կամ կվասի շիշը տրաքում ե կամ խցանը գուրս թռչում: Այս վերջին հարցին բացառություն տալու համար պետք է իմանաք, փոր գարեջրի և կվասի մեջ կամ մեծ քանակությամբ ածխաթթվական գազ:

7. ԶԲԻ ԹՈՐՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ՄԵՇ ԾՐՁԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Կարելի յե հետևյալ հասարակ փորձն անել. վերցրեք ջուրը, նրա մեջ լուծեցեք աղ, դըեք կրակի վրա և յեփեցեք: Ջուրը հետզհետե կը գոլորշիանա, իսկ ամբողջ աղը կնսաի տակը: Ջրի մաքուր գոլորշին կցնդվի ոդի մեջ: Պետք

ե իմանալ, վոր ովկիանոսների աղի ջուրն ելարեի ջերմությունից գոլորշիանում ե և աղերից



Ալ. 3. ԶԲԻ ԹՈՐՈՒՄԸ.

բոլորովին աղատված բարձրանում ե ոդի մեջ: Նավերի վրա ծովի աղի ջրից ստանում են քաղց-

բանամ ջուր: Վերցնում են ծովի ջուրը, յեռացնում թերանը փակ ամանի մեջ, այդ ամանի փերեխ մի խողովակ են տանում մի ուրիշ ամանի մեջ, վոր զրված ե սառը ջրի մեջ: Առաջին ամանից խողովակի միջով գոլորշին անցնում է յերկրորդ ամանի մեջ և այստեղ սառչելով դառնում ե ջուր, այս գործողությունը կոչվում է թորումն, իսկ ջուրը թորած ջուր: Դեղատներում միայն թողած ջուր են գործածում դեղ պատրաստելու ժամանակ:

Տեսնենք՝ ինչ է կատարվում այն ջրի հետ, վոր անձրեկ կամ ձյան ձևով թափվում ե լեռների վրա: Վորովինետև լեռների վրա շատ ցուրտ ե, նրանց կատարների և լանջերի վրա հավաքվում ե ձյունը, վոր հալվերով և նորից սառչելով դառնում ե սառուց: Այդ սառուցն ու ձյունը կամաց կամաց սողում են դեպի ցած և սառցադաշտեր կազմում և վերջապես, յերբ հասնում են այնպիսի տեղ, վոր սառուցն սկսում ե հալվել, այն ժամանակ ստանում ենք լեռնային վրտակներ ու գետեր: Յեթե նույնիսկ լեռը բարձր չե և նրա վրա հավիտենական ձյուն չի նստած՝ ելի այդ լեռից հոսում են ջրեր: Այստեղից մեզ համար հասկանալի յէ դառնում, թէ ինչու մեր գետերը սովորաբար սկիզբ են առնում բարձրություններից: Իսկ մուր են դնում գետերի ջրեր:

Գնում են ծովերն ու ովկիանոսները, վորաեղից դարձյալ դոլորշիանում են և բարձրանում ողի մեջ:

Հետևանքը լինում է մի մեծ շրջանառություն: Զուրը գոլորշիանում ե և բարձրանում վերև ողի մեջ, այնտեղից թափվում ե ցած անձրևի և ձյան կերպարանքով և նորից գետերի ընթացքով վերադառնում ե ծովերն ու ովկիանոսները: Յեվ այդ մեծ շրջանառության մեջ մասնակից են, ինչպես արդեն ասացինք, բոլոր կենդանի արարածները: Բայց այստեղ չպետք է մոռանանք, վոր յեթե արել չլիներ, ովկիանոսների ջրերը չելին գոլորշիանա և ալդ մեծ շրջանառությունն ել տեղի չեր ունենա: այն թարմությունն ու կենդանությունը, վոր անձրեկից հետո ստանում ե յերեիրը, չեր լինի: Այստեղ արեն ե այն խթանը, վոր առաջ ե բերում ջրի շրջանառությունը:

8. ԱՆՁՐԵՎ ԳԱԼՈՒ ՊԱՏՃԱՌԸ ՅԵՎ ՅԵՂԱՆԱԿԻ ԳՈՒԾԱԿՈՒՄ

Այսպես ուրեմն, յերկրի մակերեսից ջուրն անընդհատ բարձրանում ե վերև և անձրեկ ու ձյան ձևով իջնում ե գետին: Այն ժամանակ ինչու զանագան վալրեր տարրեր քանակությամբ անձրեկ ու դալիս, կհարցնեք դուք: Որինակ՝ Յե-

բեանում ավելի քիչ ե անձրե գալիս, քան Ստեփանավանում։ Այդ մենք բացատրում ենք նրանով, զոր անձրեկի գալը կախված ե ողի մեջ գտնված ջրային գոլորշիների քանակից։ Իսկ ողի խոնավության քանակը տարբեր ե, զորովհետև առեղական բնույթ չի կրում։ Այսինքն, Յերեանում անձրե ե գալիս զոչ թե Զանգույի կամ Գեղառ-Զայի ջրի գոլորշիացումից, այլ Յերեանի անձրեաբեր ամպերը գալիս են քամու միջոցով ավելի հեռվից—Սև ծովից և Առանտյան ռվկիանոսից, զորտեղ մեծ չափով ջրի գոլորշիացում ե կատարվում։ Հիմա այն վայրերը, զորոնք ավելի մոտիկ են ծովերին և ովկիանոսներին կամ մոտիկ չեն, բայց այդ ուղղությամբ մշտապես փչող քամիները քշում բերում են խոնավաբեր գոլորշիներ, և բարձր լեռները նրանց չեն խանգարում, բնականաբար այդ տեղերում առատ անձրեներ են լինում։

Այժմ ընդունենք, թե դուք շատ լավ ծանոթ եք, թե ավալ վայրում յերբ, վնասեղից և ինչպիսի քամիներ են փչում, ան ժամանակ ձեզ համար դժվար չի լինի գուշակել, թե այդտեղում այդ որն ինչպիսի յեղանակ պիտի անի, պարզ, թե անձրեալին։ Մի բան, զոր հողագործի համար խիստ կարեոր ե, նա որինակ՝ կիմանար՝ կարելի յե հունձ անել, թե զոչ կամ ընդ-

հանըապես գլուխանաեսական ալս կամ այն աշխատանքը կատարել։ Որինակ՝ յեթե իմանար, զոր այդ շաբաթը անձրեալին պիտի լինի, նա կզուշանար խոտ հնձելուց։

Ամերիկայում յեղանակների ու սումենասիրությունն այնպիսի լավ հիմքերի վրա յե դրված, զոր նրանք կարողանում են ամբողջ մի շաբաթ առաջ յեղանակի փոփոխությունը գուշակել և այդ մասին Ամերիկայի զանազան վայրերը հեռագրերով հաղորդել։

Կասկած չկա, զոր յեթե մենք ել աշխատենք մեր գործերը գիտական հիմունքներով վարել, զոչ մի դժվարություն չենք ունենա նույն հաջողություններին համելու։ Համենայն դեպս մեծ հիմարություն ե մտածել, թե յեղանակի փոփոխությունը կախված ե ուղղոթքներից կամ թափորներից։

Գիտությունն ունի մի գործիք, զորը կոչվում ե բարոմետր կամ ծանրաչափ, զորի ոզնությամբ կարելի յե մեկ որ առաջ գուշակել յեղանակի փոփոխությունը։ Թե ինչ կազմություն ունի այդ գործիքը, մենք նրա մանրամասնությամբ չենք զբաղվի, միայն այսքան պետք ե իմանաք, զոր այդ գործիքի մեջ կամի կլոր մետաղե արկղ, զորի միջից ողը հանած ե, Յերբ բոլոր կողմից արջապատող մթնոլորտը

ճնշում և նրա վրա, այդ արկղի կափարիչը սլղմ-
վում եւ Ազգ կափարիչը միացրած եւ առանձին
ոլաքի հետ, վորը ճնշման փոփոխության դեպ-
քում շարժվում եւ աջ կամ ձախ և ցույց եւ տա-
լիս, թե ինչպիսի յեղանակ եւ լինելու:

Որինակ, յեթե փշում են խոնավաբեր քա-
միները, վորոնք չոր ողից անհամեմատ թեթև
են ջրային գոլորշիների թեթևության պատճա-
ռով, այն ժամանակ մթնոլորտի ճնշումը նվա-
զում է, բաշումետրի կափարիչը բարձրանում է
և ոլաքը շարժվում է վորոշ ուղղությամբ:
Իսկ յեթե ընդհանառակը, չոր քամիներ են փր-
չում, մթնոլորտի ճնշումն ավելանում է և ոլա-
քը շարժվում է այլ ուղղությամբ: Ահա, ոլաքի
տեղափոխության միջոցով մի քանի ժամ առաջ
իմանում են, թե յեղանակի մեջ ինչ փոփոխու-
թուն պետք եւ տեղի ունենա, անձրև պիտի լի-
նի, թե պարզ յեղանակ:

9. ԶՐԻ ԲԱԼԱԴՐԻՉ ՏԱՐՐԵՐԸ.

ԶՈՒՐԸ ՅԵՎ ԱՅՐՈՒՄԸ


Զրի ուսումնասիրությունը ցույց եւ տվել,
վոր նրա բաղադրիչ տարրերն են թթվածինը
և ջրածինը: Բայց մենք արդեն գիտենք, վոր
յեթե մի վորևէ նյութ թթվածնի հետ միանում

է, նշանակում եւ այնտեղ կատարվում եւ այլումն.
Նշանակում եւ ջուրը պետք եւ ջրածնի այրման
արդյունքը լինի, ուրիշ խոսքով ջուրը ջրած-
նի ոքսիդն եւ: Յեկ իսկապես, յեթե մի ա-
մանի մեջ ջրածնին ստանանք, բերանը պինդ փա-
կենք խցանով և այդ խցանի միջով մի բարակ
խողովակ անցկացնենք, վոր ջրածնը փոքր քա-
նակությամբ այնտեղից դուրս գա և վառած
լուցկին մոտեցնենք, նա իսկուն կըռնկվի, իսկ
յեթե բոցի վրա կործենք մի բոլորովին չոր բա-
ժակ, կտեսնենք, վոր բաժակի ներսը կդոյանան
ջրի կաթիլներ: Այդ կաթիլներն ստացանք ջրած-
նի կաթիլներց, ի հարկե, նախ գոյացավ ջը-
րային գոլորշի, վորը գիպչելով բաժակի սառը
պատերին, դառավ ջրի կաթիլ: Այս փոքրիկ
փորձը մեզ պարզապես ցույց եւ տալիս, վոր ջուրը
ջրածնի այրման արդիունքն եւ: Յեկիսկա-
պես, զարմանալի բան ե, չե: Մենք ամենքս ել գի-
տենք, վոր կըակը հանգցնում ենք ջրով և այլումը
դադարեցնում, իսկ այստեղ հանկարծ դուրս եւ
գալիս, վոր ինքը՝ ջուրը այրման արդյունք եւ:

10. ԶՐԱՄԻՆ, ՆՐԱ ՍՏԱՆԱԼԸ ՅԵՎ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի՞նչպես ստանանք ջրածնին և հավաքինք
բավականին քանակությամբ: Ջրածնին կարելի յե-

ստանալ զանազան միջոցներով, ի միջի այլոց
հենց ջրից: Վերցնենք նրանցից ամենասովորա-
կանը: Նախապես պետք ե ասել, վոր բոլոր թը-
թուները, լինեն նրանք աղախին, քացախային,
ծծմբական կամ ուրիշները, անպատճառ իրենց



Նկ. 4. Ցինկի վրա ծծմբաթթվի
ջրածին լուծույթ թափելով ջրածին ստանալ.

բաղադրության մեջ պարունակում են ջրածին:
Որինակ, ծծմբական թթուն թթվածնի, ծծմբի և
ջրածնի միացումն ե. նշանակում ե նա բարդ
մարմին և կազմված ե յերեք պարզ մարմին-
ներից: Վորպեսզի այդ միացման միջից ջրածի-
նը խթնք և հավաքենք, մի այսպիսի վորձ ենք

անում: Թթվի վրա մի քանի կաթիլ ջուր ենք
ավելացնում և նրա մեջ ձգում ենք մի քանի
կոտոր ցինկ: Այն ժամանակ մի զարմանալի յե-
րկույթ ե տեղի ունենում. թթվուտի միջից պըղ-
պջակներով բաժանվում ե ջրածինը, վոր կարե-
լի յե հավաքել մի այլ սրվակի մեջ, ինչպես այդ
ցուց ե տրված նկարի մեջ: Վերցնում ենք
յերկվիզ սրվակ, մեկում դնում ենք յերկար մին-
չև սրվակի հատակը համոզող խողովակով մի ձա-
գար, իսկ մյուսում ապակե ծնկածե խողովակ:
Զագարի միջով լեցնում ենք թթվուտը:

Ի՞նչ ե կատարվում սրվակի մեջ: Ցինկը
կարծես թե հարձակվում ե թթվուտի վրա և
առանց ալկալության նրա միջից դուրս ե ա-
նում ջրածնին և ինքը բռնում նրա տեղը: Այ-
սկս վոր՝ այժմ ծծմբական թթվի փոխարեն ըս-
տացվում ե մի նոր միացում՝ ցինկի, ծծումբի և
թթվածնի: Այս յերկույթը կոչվում ե փոխա-
րինման դործողություն: Վորովիհատե այս-
տեղ ջրածնին փոխարինում ե ցինկը և տալիս ե
ծծմբաթթվական ցինկ կամ ցինկի արջասպ,
յեթե փոխարինողը լիներ յերկաթը, կստանալինք
յերկաթի արջասպ և այն: Արդեն ասացինք, վոր
բոլոր թթուները ջրածին ունեն, ուրեմն նրան
կարելի լե հեռացնել մետաղի միջոցով: Որինակ,
յեթե ցինկի միջոցով դուրս անենք աղաթթվի

կամ քացախական թթվի ջրածինը, կտտանանք
աղաթթվային կամ քացախաթթվային ցինկ,

Ուրեմն, կարող ենք ուղղակի վորոշել այս-
պես. աղն այն նյութն է, վոր ստացվում
է թթուների ջրածինը մի վորեւ մետա-
դի փոխարինելով:

Դուք բոլորդ ել սովորել եք՝ աղ ասելիս սե-
ղանի աղը հասկանալ, կարելի լե այդ աղն ել
ստանալ, յեթե աղաթթվի ջրածինը փոխարինենք
նատրիում կոչված մետաղով, վոր բնության մեջ
դժվար է մաքուր վիճակում ճարել. Դա արծա-
թափալ, փափուկ և թեթե մետաղ է, դանակով
կտրվում է, ինչպես մեղրամոմը. Մաքուր վի-
ճակում նա բնության մեջ չի գտնվում, վորով-
հետև արագությամբ միանում է թթվածնի հետ,
այնպես վոր, յեթե նրանից մի կտոր թողնենք
ազատ ողի մեջ, թեկուզ մի քանի ըռափե, նա իս-
կույն կսիանա թթվածնի հետ և կդառնա նատ-
րիումի ոքսիդ: Վորպեսզի նատրիումը կարելի
լինի մաքուր վիճակում պահել, դնում են նավ-
թով լցրած որվակի մեջ, վորովնան նավթն իր
մեջ թթվածին չի պարունակում:

11. ՀՈՂԻ ՅԵՎ ԱՂԲԻ ՄԵԶ ԳՏՆՎԱԾ ՍՆՆԴԱՐԱՐ ԳԱԶԵՐԸ. ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ

Բանի վոր խոսեցինք աղի մասին, այժմ
մենք աշխատենք մեր ուշադրությունը կենտրո-
նացնել այն բանի վրա, վոր բացի մեզ շատ
լավ հայտնի սեղանի աղից, գոյութիւնն ունեն
նաև բագմաթիվ աղեր, վորոնք աղի համ չու-
նեն: Ամեն թթվից կարելի լե աղ ստանալ, յե-
թե նրա ջրածինը փոխարինենք վորեւ մետա-
ղով: Որինակ, յեթե բացախը թափվից պղնձե
առարկավի վրա, խկույն կծածկվի կապտագույն
բծերով, այսինքն կտացվի բացախաթթվի
պղնձային աղ:

Բոլոր հողերի մեջ կան զանազան աղեր,
զանազան թթուներից. որինակ, ծծմբաթթվային
լուսածնի աղ, ազոտական աղ և ուրիշ: Այդ աղե-
րից շատերը մեծ նշանակություն ունեն բույ-
սերի համար, վորպես սնունդ: Նրանք ոդտա-
կար են բույսերի համար, գլխավորապես, յերեք
պարզ մարմինների պատճառով, վորոնք մտնում
են այդ աղերի բաղադրության մեջ — աղոտ,
կալիում և լուսածին:

Նրանց անհրաժեշտառթյունն ապացուցված
է առանձնակի փորձերով. վերցնում են բույսի
սերմը, անկում են մի այնպիսի հողի մեջ, վորը

դուրկ և վորենէ աղից, տեսնում են, վոր ստացվեց շատ վտիտ բռւյս, մեկ ուրիշ սերմ մնկում են մի այլ հողի մեջ, վորտեղ այդ աղը կա և ստանում են լով տձող բռւյս. նշանակում է այդ աղը բռւյսի համար տնհրաժեշտ ե. սովորաբար այդպիսի փորձերն անում են ջրային լուծույթների մեջ, վոր ավելի հեշտ է և հետևանքներն ավելի շուտ են ստացվում:

Ցերք հողը պարարտացնում են, նշանակում է նրա մեջ մտցնում են բռւյսերի համար անհրաժեշտ զտնազան աղերը: Այդ տեսակետից աղը համարվում է լրիվ պարարտանյութ, վորովհետև նա իր մեջ պարունակում է բռւյսերին անհրաժեշտ բոլոր հիմնական աղերը: Բայց կարող է և միակողմանի պարարտացում լինել, այսինքն պարարտանյութն իր մեջ բոլոր աղերը չպարունակի, այլ մի քանիոր կամ նույնիսկ միայն մեկը. որինակ, վոսկը փոշին, բռրակը, մոխիրը և այլն:

12. ԱՇԽԱԹԹՎԱԿԱՆ ԳԱԶ, ՆՐԱ ՍՏԱՆԱԼԸ ՅԵԼ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այժմ անցնենք ոգի մեջ գտնված ածխաթթվական զագին, վորը չնայելով, վոր կազմում է նրա յերեք տասհազարերորդ մասը, բայց հոկայական դեր է խաղում բռւյսերի կյանքի

մեջ: Նրա բաղադրիչ տարրերն են ածխածինը և թթվածինը:

Հետաքրքիրն այն է, վոր այս գազը գտնը վում է կավճի և մարմարի մեջ, այդ պատճառով, յեթե ուզում ենք ածխաթթվական գազ ստանալ և նրա հատկությունների հետ ծանոթանալ, մենք ոգտվում ենք մարմարից: Վերց-



Նկ. 5. Ածխաթթվի մեջ մոմը չի այրվում.

նենք մի կտոր կավիճ կամ մարմար և նրա վրա ածենք բացախ. կավճի կամ մարմարի կտորն իսկուն կսկսի թշալ և իրենից արձակել ածխաթթվական գազ: Այդ գազից մեծ քանակությամբ ունենալու համար վերցնում ենք դարձրալ նույն յերկվզանի սրվակը, վորի մասին քիչ առաջ խոսեցինք ջրածին ստանալու ժամանակ: Մըկակի մեջ գնում ենք մի քանի կտոր մարմար, ձագարի միջով վրան լցնում ենք աղաթը-

թու և ինչ ենք տեսնում: Մարմարի միջից քայլայվում ե կիրը և ածխաթթվական գազն աղատվում ե գերությունից: Առանձին խողովակով նրան հավաքում ենք մեկ ուրիշ ամանի մեջ:

Զարմանալին այն ե, վոր թեև ածխաթթվական գազն իր մեջ պարունակում ե թթվածին, նույնիսկ ավելի մեծ քանակով, բայց նրա մեջ ազրումն տեղի չի ունենում: Յեթե այրված լուցկին մացնենք ածխաթթվական գազով լիբը սրվակի մեջ, իսկույն կհանգչի: Ինչու: Նրա համար, վոր ածխաթթվական գ.զի մեջ գտնված թթվածինն ազատ չե, նա զբաղված ե, նա այնպէս պինդ միացած ե ածխածնի հետ, վոր լուցկին չի կարող նրան խլել: Ողի մեջ լուցկին կարող ե այրվել, վորովհետև այնտեղ թթվածինն ազատ ե. թեև ողի մեջ կան ուրիշ գազեր, բայց նրանց հետ նա սոսկ խառնուրդ ե կազմում և վոչ թե միացած ե:

Բայց միթե ածխաթթվական գազի ձեռքից թթվածինը խլելու վոչ մի միջոց չկա: Ահա մի մետաղ, վոր կոչվում ե մագնիում: Այս մետաղն ողի մեջ այրվում ե այնպիսի պալծառ լույսով, վոր առանց աչքերդ կկոցիլու չես կարող նրա բոցին նայել: Այդ նշանակում ե մագնին շատ աղանությամբ ձգտում ե թթվածնի հետ միա-

շալ: Յեթե մենք մագնու ժապավենն ալրենք և մտցնենք ածխաթթվական գազով լի սրվակի մեջ, զարդանքով կնկատենք, վոր նա այնտեղ կշարունակի ալրվել: Ինչումն ե գաղտնիքը: Ամբողջ գաղտնիքը մագնիումի վերաբերմունքի մեջն ե դեպի թթվածինը: Նա ածխածնից ավելի ուժեղ ձգտում ունի գեպի թթվածինը, այդ պատճառով ածխաթթվական գազի մեջ ընկնելով, ուրիշ խոսքով ածխածնի և թթվածնի ընկերության մեջ, քանդեց նրանց մտերիմ կապը, դուրս արեց ածխածնին և բռնեց նրա տեղը: Ածխածինը ստիպված պետք ե հառանա: իսկապես սըրգակի պատերի վրա, մագնիումի ալրվելուց հետո, տեսնում ենք սև մուր: Ուրեմն կարող ենք ասել, թե այրվող մագնիումը քայլայեց ածխաթթվական գազն իր բաղադրիչ տարրերին և նրանցից մեկի հետ միացավ:

13. ԿՐԱՉՐԻ ՈԳՆՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱԹԹՎԱԿԱ ԳԱԶԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՍՏՈՒԳԵԼԵ

Յերբ յերկվզանի սրվակի միջից ածխաթթվական գազը դուրս ե գալիս, ողի մեջ չի լեռնում, վորովհետև նա բոլորովին անգույն ե թափանցիկ: Նրա ներկայությունը կարելի յետուգել: յեթե մոտեցնենք վառած մոմը նրա

դիմաց, նա իսկույն կհաճնգչի: Բայց մի ավելի
պարզ միջոց կա ստուգելու—կրաջրի ոգնությամբ: Այդ ջուրը տեսքով սովորական ջրից չի տար-
բերվում, բայց նրա մեջ լուծված կիր կա: Կրա-
ջուր ստանալ այնքան ել դժվար բան չե: Վերց-
նում ենք հանգած կիրը բաժակի մեջ և վրան-
լցնում ենք ջուր, մի փոքր սպասելուց հետո
ջուրը քամում ենք: Ահա այդ ջուրն իր մեջ պա-
րունակում է կրի լուծույթ: Յեթե այդ կրաջրի
մեջ փշենք ածխաթթվական գազ, նա իսկույն
կպղառի, փորովհետև ածխաթթվական գազը մի-
անում է լուծույթի կրի հետ և կազմում կավիճ,
իսկ կավիճը ջրի մեջ չի լուծվում: Ջրի պղառ-
ըելու պատճառն այդ կավիճն է:

Յեթե բաժակով կրաջուրը թողնենք բաց
ողում, մի քանի ժամանակից հետո նրա լերե-
սին կավճի սպիտակ փառ կրոնի: Շատ հասկա-
նալի լե, թե ինչու: Ողի մեջ միշտ կա ածխա-
թթվական գազ, նա կրաջրի լերեսի շերտի կրի
վրա ազդում է և կազմում կավիճ:

Այժմ հետեւսալ հետաքրքիր փորձը կատա-
րենք: Վերցնենք մի ապակե խողովակ, մի ծալ-
րը գնենք բերաններս, իսկ մյուս ծալրը կրա-
ջրով լի բաժակի մեջ և փշենք: Իսկույն կրա-
ջուրը կպղառի: Այս ել արդեն ապացուց է,
փոր մեր արտաշնչած ողի մեջ ածխաթթվական-

դագ կա, ի հարկե նրա մյուս բաղադրիչ տար-
բերի հետ խառը Զպետք ե մոռանանք, վոր շըն-
շառության հետևանքով մեր որդանիզմի մեջ կա-
տարվում ե դանդաղ այրումն: Ամեն մի կենդա-
նի որդանիզմ իր մեջ պարունակում է ածխա-
ծին: Ուրեմն զարմանալու վոչինչ չկա, յեթե
այդ ածխածինը դանդաղ այրվելով տալիս ե ած-
խաթթվական գագ:

Մեր գործածած բոլոր վասելիքներն իրենց
մեջ պարունակում են ածխածին—փայտը, նավ-
թը, ածուխը, տորֆը և այլն, այդ պատճառով
այլքան ժամանակ միշտ գոյանում է ածխաթթը.
վական գագ և ցնդում ողի մեջ, կենդանի որ-
դանիզմների արտաշնչած ածխաթթվական գազն
ել և այնտեղ հավաքվում է յեթե հաշվի առ-
նենք, վոր հրաբուղխների, յերկրաշարժների,
փառոյ գիտակների արտագրած ածխաթթվական
գագն ել ցնդում և ողի մեջ, այն ժամանակ մեզ
հասկանալի կլինի, թե ինչպիսի հսկա քանակու-
թյամբ ածխաթթվական գագ և հավաքվում մըթ-
ոլորտի մեջ: Ակամա մեր զլխում մի ահոելի
միտք ե ծագում: մեկ որ պիտի ամբողջ միթո-
լորտը լցվի այդ գազով և նրա թթվածինը բո-
լորովին սպառվի, վորովհետև ամեն այրման,
չնշառության, փառումի և այլ գործողությունների
ժամանակ թթվածին ե ծախսվում: Այն ժամանակ,
մարդը, նրա հետ միասին և ամբողջ կյանքը
յերկրիս լերեսից պիտի վերանա:

Բայց մարդկութիւնը հազարավոր տարիներ ապրում ե յերկրագնդի վրա և չի նկատել, վու մթնոլորտի ածխաթթվական գաղի քանակը, գոնե նկատելի չափով, փոխված լինի: Զարժանալիքան չե, վոր ամբողջ ժամանակ անընդհատ ածխաթթվական գաղն արտադրվի և այնուամենանիվ նրա քանակը չափելանա:

Բայց այս խնդիրը պետք ե մենք ձեզ հետ գնոենք, թե չե մեզ կարող են մեղադրել, վոր մենք լավ թվաբանութիւն չգիտենք: Պարզ բան ե, վոր սթորորտի մեջ անընդհատ ածխաթթվական գաղ ե ավելանում, բայց հավանական ե այս, վոր այդ գաղը պետք ե մի տեղ հետանա, վորպեսզի մուտքն ու լիքը հավասարակշռովեն, այլապես ինչու վոչ մի փոփոխություն չի նկատվում նրա քանակի մեջ:

14. ԲՈՒՅՍԵՐԻ ՍՆՈՒՆԴԵ ՅԵՎ ԱՇԽԱԹԹՎԱԿԱՆ ԳԱԶԸ

Ապակե անոթի տակ դրեք մի մուկ և ամեն կողմից պինդ փակեցեք, մի քանի ժամանակից հետո մուկը կսկսի անհանգուտանալ և լիթե այդ դրությամբ յերկար սպասեք մուկը կստեկի: Բայց, լիթե այդ անոթի տակ մկան կողքին մի կանաչ բույս դնեք, մուկն իրեն շատ հանգիստ

կզաք և նրան վոչինչ չի պատահի: Ինչու: Առաջին գեպքում մուկը սատկում ե թթվածնի պակասության պատճառով, իսկ յերկրորդ գեպքում բույսի ներկայութիւնն շնորհիվ թթվածնի պաշարը նորոգվում է:

Բանից դուրս ե գալիս, վոր ածխաթթվական գաղը բույսի համար մնունդ ե: Բուսական բջիջներն ածխաթթվական գաղի կարիք ունեն, վորովհետեւ ածխաթթվական գաղը կենդանի նյութի գլխավոր բաղադրիչ տարրն ե: Զկարծեք թե, լիթե վերցնենք մանրացրած ածուխը շաղ տանք դաշտերը, գրանից բույսերը շատ բան կշահեն: Վահանից բույսի կազմությունն այնպես ե, վոր նա չի կարող ուղղակի ածուխից վերցնել իրեն հարկավոր ածխածինը: Բույսերն ողից վերցնում են ածխաթթվական գաղը տերևների միջոցով, վորոնք դրա համար ունեն վորոշ հարմարացումներ: Լայն փոփած տերևների սկզբաների վրա կան հատուկ անցքեր, վորոնցով ածխաթթվական գաղն անցնում ե նրանց մեջ: Բայց չե վոր ածխաթթվական գաղի մեջ ածխածինն ազատ չե, նա միացած ե թթվածնի հետ: Ահա այդ կապն ե, վոր պետք ե քանդել, պետք ե ածխաթթվական գաղը տարրալուծվի ածխածնի և թթվածինի: Ահա այդ տարրալուծումը կատարում են բույսի տերևները:

Յեթե տերեկի ներքին կազմը մանրադիտակով փատենք, այստեղ կտեսնենք կանաչ հատիկներ, վորոնք կոչվում են քլոր ոփիլլի հատիկներ։ Այդ հատիկների մեջ գտնված կանաչ գույնի նյութը զարմանալի հատկություն ունի՝ արևի լուսի ազդեցության տակ ածխաթթվական գազը տարրալուծելու ածխածնի և թթվածնի. ածխածինը մնում է բույսի մեջ և ծառայում ե նրա ըջիջների կառուցման համար վորպես նյութ, իսկ թթվածինը հեռանում է ողի մեջ։ Հետեանքը լինում է այն, վոր ողի ածխաթթվական գազի մի մասը հեռանում ե և նրա փոխարեն ավելանում է թթվածինը, իսկ այդ թթվածինն անհրաժեշտ է կենդանիների շնչառության համար։ Ահա, թե ինչու տնտեսում և դաշտերում մենք ավելի թեթև ու կանոնավոր ենք շնչում։ Ահա թե ի՞նչպես բույսն ազատեց ապակե անոթի տակ գտնված մկան կյանքը։

15. ԱՌԽԱՎՄՆԻ ՄԵԾ ԾՐՁԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Յենթադրենք, վոր գաշտերից բերքը հավաքեցինք, տարանք տուն, կաւեցինք, աղացինք, հաց պատրաստեցինք և կերանք։ Ի՞նչ ե կատարվում։ Այն ածխածինը, վոր ամբարվել և սերմերի մեջ, ընկնելով մեր մարմնի մեջ գնում,

վորիարինում ե այն ածխածինին, վոր մեր մարմնի բլիջներում ալրվել ե։ Այս նոր ածխածինն իր հերթին ալրվում է և նորից կազմում ածխաթթվական գազ, վորը դուրս ե գալիս ողի մեջ և բույսերի համար գառնում վորպես սնունդ։ Նույնպես կովը կամ ձին, յերբ խոտ են ուտում, խոտից վերցնում են ածխածինը, բայց շնչառության ժամանակ նորից գուրս են արտաքսում ածխաթթվական գազի կերպարանքով։ Այսպես ստացվում է ածխածնի մեծ շրջան առություն, վորտեղ մամնակցում են բույսն ու կենդանին։ Բույսերի ածխածինը բուսական կերակուրների միջոցով մտնում է կենդանիների մեջ և հետո ածխաթթվական գազի վիճակում նորից վերադառնում է բույսերին, վորպես կերակուր։ Ուրեմն միենալին ածխածնի մասնիկը բազմաթիվ անգամ շրջում է բույսերից կենդանիների մեջ և կենդանիներից բույսերի։

Յեթե մենք մսեղեն կերակուր ենք գործածում, գարձյալ ոգտվում ենք բույսի ածխածնից։ Ճիշտ և, մենք տավարի միսն ենք ուտում, բայց չե վոր այդ մսի ածխածինը գոյացել ե այն խոտերի ածխածնից, վոր կովը կամ յեզը կերել են մարգագետնում։ Նշանակում ե այստեղ ել հիմքը բուսական աշխարհն ե։ Բայց ճշմարիտ շերլինի, յեթե մտածելինք, վոր կենդանիները և

ԱԵՆՔ բուլսերի վերաբերմամբ պարագիտներ ենք,
չե՛ վոր մենք ել մեր հերթին նրանց կերակուում
ենք մեր արտաշնչած ածխաթթվական գաղով:
Այսաեղ ավելի շուտ փոխադարձ ծառայության
հարց կարող ե լինել: Բայց կենդանիները բուլ-
սերին ածխածին են մատակարարում վոչ թե
միայն կենդանի ժամանակ, այլև մեռած ժամա-
նակ: Չե՛ վոր կենդանիների և մարդու զիակն-
ուշ թե շուտ փուում ե. այդ ժամանակը ինչպես
ասացինք, գոյանում ե ածխաթթվական զազ, վո-
րից ոզավում են բուլսերը, այդ բուլսերից՝ կեն-
դանիները և այսպես շարունակ:

Շատ տարիներ են ապրում կենդանիներն
ու բուլսերը, շատ կենդանի կյանքեր ապրում
են ու մեռնում և նրանց փոխարեն հայտնվում
են նորերը: Որդանիզմների անվերջ փոփոխու-
թյուն, անվերջ մահ և ծնունդ, նյութերի ան-
վերջ շրջանառություն մեկ որդանիզմից մյուսը:
Ահա մեր յերկրագնդի կյանքը բնության մեջ:

16. ՈԴԻ ԱԶՈՏԸ, ԱԶՈՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԸ ՅԵՎ ԿՅԱՆՔԸ

Այժմ դառնանք ողի գլխավոր բաղադրիչ
տարրին, վոր քանակով ամենաշատն ե. նրան
մենք ասում ենք բորակածին, բայց նրա գիտա-

կան անունը ազոտ ե: Սա հունարեն բառ ե և
նշանակում ե անկյանք: Ազոտին այդ անունն
են տվել նրա համար, վարովհետև շատ անտար-
բեր ե գեպի մյուս մարմինները, այսինքն շատ
գժվարությամբ ե նրանց հետ միացումներ կազ-
մում. որինակ հենց թթվածնի հետ: Բայց ագո-
տի հետ մոտիկ ծանոթանալուց հետո մենք կը
տեսնենք, վոր նա կյանքի համար շատ կարեոր
նյութ ե: Առանց նրան կյանք չի կարող լինել:

Պետք ե նկատի ունենալ, վոր ազոտն ու-
րիշ պարզ նյութերի հետ միացումներ կազմելիս
հեշտությամբ քանդվում ե, կայուն չե: Ահա այդ
անկայունությունը կյանքի համար անհրաժեշտ
է, զբանով ստեղծվում ե անընդհատ նյութերի
փոխանակություն: Շատ հասկանալի յե, վոր
նյութերի փոխանակության համար անհրաժեշտ
է, վոր որդանիզմի մեջ մտնող նյութերը լինեն
անկայուն: ահա հենց այդ բանին նպաստում ե
ազոտի ներկայությունը: Կայուն և պողպատի
նման ձուլմած միացումները կյանքի համար ան-
պետք են: Կենդանի որդանիզմների մեջ ազոտա-
յին միացումներն ընդհանուր անունով կոչվում
են սպիտակ կուցներ:

Ազոտի միացումների մեջ կարեոր տեղ են
բռնում ջրածնի և թթվածնի հետ միացումները:
Ցերը մի մասնիկ ազոտ միանում ե յերեք մաս-

Նիկ վրածնի հետ, ստանում ենք մի գագանման մարմին, վոր կոչվում ե ամմիակ, վորը շատ յավ լուծվում ե ջրի մեջ և շատ սուր հոտ ունի. Այդ լուծույթը ձեզ շատ ծանոթ ե և կոչվում ե նաշաղը ի վորի: Յերբ բույսերի մնացորդները կամ կենդանիների դլակները փառվմ են, ամենից առաջ նրանց մեջ գտնված աղոտից ըստացվում ե ամմիակ, վոր հետո մտնում ե մյուս միացումների մեջ: Գոմազը, մեզի, մարդու կղկղանքի բայթայումից նույն սուր հոտն ե գալիս. նշանակում ե նրանց մեջ ամմիակ կա:

Ազոտը թթվածնի հետ զանազան միացումներ ե կազմում, վորոնք մեծ մասամբ գագեր են: Երանք դոյանում են մթնոլորտի մեջ բնական ճանապարհով, կալծակի հարվածների և վորոտի ժամանակ. Ազոտային արդ ոքսիզները ջրի հետ խառնելով ստացվում ե ազոտական թթու: Իսկ յեթե արդ թթվի ջրածնին փոխարինում ե մի վորեե մետաղ, կտանանք ազոտաթթվական ազ. որինակ, նատրիում, կալիում—ազոտաթթվական նատրիում կամ կալիում:

17. ԱԶՈՏԻ ՇՐՋԱՆԱՊՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ

Յերբ գյուղացին դաշտից բերքը տուն ե կրում, դրանով արգեն հողը զրկվում ե ազո-

տավին աղերից: Իսկ յեթե մենք չենք ուզում, վոր հողն ուժասպառ լինի, պետք ե արհետահան կերպով նրան վերադարձնենք իր աղոտումն աղերը: Իսկ այդ բանը մենք կատարում ենք աղբի սիջոցով:

Վհրաեղից ե աղբի մեջ ազոտ: Զե՞ վոր աղբն անասունների, կղկղանքի, մեզի և հարպի կտորների խառնուրդ ե: Հենց արդ նյութերն են, վոր իրենց մեջ պարունակում են շատ ազոտ: Յերբ աղբի մեջ փառվմ ե կատարվում, այն ժամանակ առաջանում են ազոտացին աղերը, վորոնցից ոգտվում են բույսերը: Բացի աղոտից, աղբն իր մեջ ուրիշ շատ ոգտակար նյութեր ե պարունակում, բայց նրանց մասին մենք նաւազություն չունենք խոսելու:

Այստեղ ել կատարվում ե ազոտի շրջանառություն: Յերբ անասուններն ուտում են մարդագեետնի խոտերը, նրանց միջոցով հողից վերցնում են ազոտը, իսկ յերբ նրանց աղբը սփռում ենք գաշտերը, այն ժամանակ նրանցից վերցրած ազոտը վերադարձնում ենք հողին: Կենդանիներն ու մարդը մեռնելուց հետո նույնպես վերադարձնում են հողին իրենց բոլոր ազոտացին նյութերը: Ուրեմն այս շրջանառության մեջ ել գերակատարները նույն անձինք են:

Մենք տեսանք, վոր մեր դաշտերի հողը մեծ

կարիք ունի ազոտի, յերբ ամեն անգամ հավա-
փաքում ենք բերքը: Ճիշտ ե աղբով պարարտաց-
նելով մասամբ կամ գուցե լրիվ վերադարձնում
ենք նրան այդ կորուստը, բայց ամեն անգամ
վորտեղից ճարենք այսպիսի քանակությամբ ազբ,
վոր մեր բոլոր արտերին բավարարի: Դրա հա-
մար զիտությունը մտածել ե ոգտագործել մըթ-
նոլորտում գտնված ազոտի անսպառ պաշարը:
Մենք արդեն տեսանք, վոր վորոտի ու կայծա-
կի ժամանակ բնական ճանապարհով մթնոլորտի
ազոտից գոյանում ե ազոտի ոքսիդ, վորո ջրի
հետ խառնվելով դառնում ե ազոտական թթու,
իսկ թթվից աղ ստանալը դժվար չե:

Ելեքտրական ուժեղ կայծի միջոցով ողի
ազոտը միացնում են թթվածնի հետ կամ ուրիշ
խոսքով ալրում են և ստանում ոքսիդներ: Վեր-
ջին ժամանակներս այդ ձևով մեծ քանակու-
թյամբ բորակ են պարարտացնում նորվեգիույում
և նրանով պարարտացնում ամբողջ Յեվրոպայի
հողը: Մեզ մոտ ել այդ ուղղությամբ արդեն աշ-
խատանքներ են տարվում: Զորագետի հիգրոկա-
յանը պատրաստ լինելուց հետո, մենք ել կոգուա-
դործենք մթնոլորտի ազոտը: Գիտությունը մար-
դուն ազատում ե բնության գերությունից: Գի-
տության բարիքներից ոգտվելով, մարդը գիտա-
կից կերպով բնությունը պիտի ծառալեցնի իր
պետքերին:

ԲՈՎՈՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- | | |
|--|----|
| 1. Ողի բաղադրիչ տարրերը | 3 |
| 2. Թթվածին, նրա ստանալը և հատկությունները | 4 |
| 3. Թթվածին և այրումն | 7 |
| 4. Թթվածին և շնչառություն | 11 |
| 5. Ծլող սերմի շնչառությունը և նրա մեջ
առաջացող ջերմությունը | 12 |
| 6. Զրային գոլորշիներն ողի մեջ և անձրի 16 | |
| 7. Զրի թորումը և նրա մեծ շրջանա-
ռությունը | 20 |
| 8. Անձրի գալու պատճառը և լեզանակի
գուշակում | 23 |
| 9. Զրի բաղադրիչ տարրերը. ջուրը և այ-
րումը | 26 |
| 10. Զրածին, նրա ստանալը և հատկությունները | 27 |

11. Հողի և աղբի մեջ գտնված սննդարար գա-	
գերը: Պարարտացում	31
12. Ածխաթթվական գաղ, նրա ստանալը	և
հատկությունները	32
13. Կրածրի ոգնությամբ ածխաթթվական	
գաղիներկայությունն ստուգելը	35
14. Բուլսերի սնունդը և ածխաթթվական գաղը	38
15. Ածխածնի մեծ շրջանառությունը	40
16. Ողի ազոտը, ազոտային նյութերը	և
կյանքը	42
17. Ազոտի շրջանառությունը և պարարտա-	
ցում	44



) — (

ԼՈՒՅԾԱ ԵՆ ՏԵՍԵԼ ՆՈՒՅՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՑ	
	ԳԻՒՆԸ
1. Տերեվաթափի և աշնան գույներ	10 »
2. Կհնդ. հարմարացումը և ձմեռալին քունը	10 »
3. Թռչունների չուն	10 »
4. Պառւղներ և սերմեր	10 »
5. Հող և նրա մշտկումը	10 »
6. Բանջարանոց	10 »
7. Արգի	10 »
8. Ինչ զօր կցանեա, այն ել կհնձես .	10 »
9. Մարգարետին	10 »
11. Բամբակ	10 »
12. Տորփ, քարածուխ և նավիլ	10 »
13. Կովի կերը և խնամքը	15 »
15. Բնտանի թաշունների խնամքը . . .	20 »
16. Մեղու	15 »
19. Ի՞նչպես կազմել հերթարիում . . .	10 »
20. Հանքեր	15 »
21. Շերամ	10 »
22. Անտառ	15 »

ՆՈՒՅՆՎԱՐ ԼՈՒՅԾԱ ԿՑԵՄՆԵՆ

14. Կաթնամթերքներ
17. Գյուղատնտ. մեքենաներ և զորձիքներ
18. Ակվարիում և աերքարիում